

## ԵԿԵՂԵՑՈՒ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՀԱՍՏԱՐ ՀՈԳԵՎՈՐ ՊԱՏԵՐԱԶՄ

Իններորդ հաղորդում

**Կառուցելն ու պատերազմելը. Եկեղեցին կառուցելու համար  
հոգևոր պատերազմին մասնակցելու անհրաժեշտությունը**

Գրվածքների ընթերցում. Նեմ 4, Եփս 1:19-23, 2:6, 21-22,  
4:16, 23-24, 6:10-20

**I. Նեեմիայի գրքի 4-րդ գլուխը նկարագրում է թշնամու առաջացրած խափանումները քաղաքի կառուցման առնչությամբ.**

Ա. Թշնամիները բարկացան և չափազանց կատաղեցին. նրանք ծաղրում էին իրեաներին և արհամարհում նրանց կառուցման աշխատանքը՝ խս. 1-3.

1. Թշնամիները բարկանում էին, քանի որ կառուցման աշխատանքը առաջ էր գնում, և նրանք միասին դավադրություն կազմեցին՝ զալու և Երուսաղեմի դեմ պատերազմելու՝ խս. 7-8:

2. Նեեմիան ապավինում էր Աստծուն՝ աղոթելով, որ Աստված նրանց նախատինքը նրանց դարձնի. այսպիսով՝ իրեաները կառուցեցին պարիսպը, որովհետև նրանք աշխատելու սիրտ ունեին՝ խս. 4-6:

Բ. Հրեաներն աղոթում էին իրենց Աստծուն, և նրանք Նեեմիայի ցուցումների և դեկավարման ներքո թշնամու դեմ դետ էին նշանակում ցերեկ ու զիշեր.

1. Նրանք պատրաստ էին պատերազմելու գենքերով՝ Նեեմիայի քաջալերանքի շնորհիվ, ով նրանց խրատում էր, որ իիշեն մեծ և ահարկու Տիրոջն ու պատերազմեն իրենց ընտանիքների համար՝ խ. 14:

2. Նեեմիայի ծառաների կեսը տքնում էր աշխատանքում, իսկ մյուս կեսը զենք էր բռնում՝ պատրաստ պատերազմելու՝ խ. 16:

3. Մի կողմից՝ Իսրայելի զավակները պատրաստ էին մարտնչելու, մյուս կողմից՝ նրանք ապավինում էին Աստծուն՝ հավատալով, որ Նա կմարտնչի իրենց փոխարեն՝ խս. 9-23:

4. Որպես զլխավոր իրամանատար՝ Նեեմիան նրանց միջավայրում էր, ովքեր պատրաստ էին պատերազմելու թշնամու դեմ. նա մասնակցում էր զիշերային դետին. նա այս պարտականությունները չէր քող - նում ուրիշներին, այլ ինքն էր մասնակցում դրանց կատարմանը՝ խս. 17-23:

**II. Եկեղեցու՝ որպես Աստծու քաղաքի կառուցումը դյուրին հանձնարարություն չէ. կառուցումը միայն պատերազմելով կարող է իրականացվել՝ Եփս 2:21-22, 4:16, 6:10-20.**

Ա. Երբ Իսրայելի զավակները վերադարձան գերությունից, Եզրասը, Նեեմիան և մյուսները ելան՝ վերակառուցելու տաճարն ու սուրբ քաղաքը ուժգնորեն պատերազմելու միջոցով:

Բ. Իսրայելացիները, որոնք Նեեմիայի հետ ներգրավված էին կառուցման աշխատանքի մեջ, մի կողմից՝ տքնում էին կառուցելու համար, իսկ մյուս

## ԲՅՈՒՐԵՂԱՅՈՒՄ-ՌԻՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՈՒՐՎԱԳՐԵՐ

կրողից՝ բռնած էին իրենց զենքերը՝ ճակատամարտը վարելու համար (Նեմ 4:17). սա բացահայտում է, ու ամեն անգամ, եթե մենք տքնում ենք Աստծու կառուցի վրա, անպայման ներգրավվում ենք ճակատամարտի մեջ:

- Գ. Աստծու բնակատեղը կառուցելու վերաբերյալ Աստծու և Նրա թշնամու միջև իրական հակամարտություն, դաժան մարտ է տեղի ունենում՝ խի. 1-3, 7-8.
1. Թշնամու համար ատելի է տեսնելը, որ Աստծու բնակատեղի կառուցումը հաջողությամբ առաջ է գնում:
  2. Սատանան անելու է ամեն բան, որպեսզի ընդհատի, միջամտի, խանգարի, հարձակվի և ոչնչացնի՝ Մտք 16:18-19:
- Դ. Մենք պետք է կառուցենք եկեղեցին՝ որպես տաճար, և մարտնչենք, որպեսզի Աստված թագավորություն ունենա՝ 6:10:
- Ե. Եթե սրբերը գաղրում են եկեղեցական կյանքի տարածման համար, նրանք ճակատամարտ վարող բանակ են՝ հմնտ Գրք 8:4-12:
- Զ. Եկեղեցին կառուցողները պետք է միաժամանակ կառուցեն ու մարտնչեն՝ Նեմ 4:14, 16-21:
- Է. Առանց պատերազմի և առանց պատերազմելու ոգու՝ կառուցում լինել չի կարող. կառուցման համար սպառիչ պատերազմ է պահանջվում:

### III. Եկեղեցու՝ որպես Քրիստոսի Մարմնի կառուցման համար հոգևոր պատերազմ է անհրաժեշտ՝ Եփս 6:10-20.

- Ա. Ցավոք, եկեղեցում այսօր հավատացյալներից գրեթե ոչ ոք չգիտե այս հոգևոր պատերազմի մասին. պատճառը կյանքում տկարությունն է, հոգևոր ուժի պակասությունն ու անբավականաչափ պարզությունը ճշմարտության լույսի առնչությամբ:
- Բ. Հոգևոր պատերազմը հիմնված է Քրիստոսի հաղթանակի վրա՝ Եքր 2:14, Կղս 2:15, Ա Հվի 3:8.
1. Հոգևոր պատերազմի մեկնարկը Քրիստոսի հաղթանակի վրա կանգնելին է, այսինքն՝ տեսնելը, որ Քրիստոսն արդեն հաղթել է թշնամուն՝ Երգ 4:8, Հյտ 3:21, 5:5-6:
    - ա. Աստծու Որդին հայտնի դարձվեց, որպեսզի ոչնչացնի բանսարկուի գործերը՝ Ա Հվի 3:8:
    - բ. Իր մարմնացման և մարդկային ապրելակերպի մեջ Քրիստոսը պարտության մատնեց Սատանային անապատում փորձվելու ժամանակ՝ Մտք 4:1-11:
    - գ. Մահվան միջոցով Տեր Հիսուսը ոչնչացրեց բանսարկուին՝ մահվան կարողությունն ունեցողին. Նա վերացրեց Սատանային, նրան ոչնչի վերածեց՝ Եքր 2:14:
  2. Երկրի վրա եկեղեցու աշխատանքը պարզապես Քրիստոսի հաղթանակը պահպանելին է. Տերն արդեն շահել է մարտը, և եկեղեցու խնդիրը՝ Նրա հաղթանակը պահպանելին է՝ Եփս 6:11, 13:
- Գ. Եկեղեցու և Սատանայի միջև պատերազմը ճակատամարտ է մեր՝

## ԵԿԵՂԵՑՈՒ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀՈԳԵՎՈՐ ՊԱՏԵՐԱԶՄ

Տիրոջը սիրողներիս և Նրա եկեղեցում գտնվողներիս ու երկնային ոլորտներում եղող չար ուժերի միջև՝ խ. 12.

1. Ղեկավարությունները, իշխանությունները և այս խավարի աշխարհականները ապստամք հրեշտակներն են, որոնք հետևեցին Սատանային Աստծու դեմ նրա ապստամբության ժամանակ ու հիմա երկնային ոլորտներում իշխում են աշխարհի ազգերի վրա՝ Կոս 1:13, Դմլ 10:20:
2. Մենք պետք է գիտակցենք, որ մեր պատերազմը ոչ թե մարդկանց դեմ է, այլ երկնային ոլորտներում եղող չար ոգիների ու չար ուժերի:
- Դ. Հոգևոր պատերազմը կապված է Քրիստոսի Մարմնի հետ. մենք պետք է մարտը վարենք Մարմնում՝ Եփս 1:22-23.
  1. Հոգևոր պատերազմը ոչ թե անհատական հարց է, այլ Մարմնի՝ 4:12, 16, 5:30:
  2. Եկեղեցին ընդհանրական ռազմիկն է, և հավատացյալները միասին կազմում են այս ընդհանրական ռազմիկը՝ 6:10-20:
  3. Եթե կարդանք Եփեսացիներին ուղղված բուղթը՝ 1-ին գլխից մինչև 6-րդ գլուխը, կտեսնենք, որ պատերազմը Քրիստոսի Մարմնի հարց է, իսկ Մարմինը նոր ստեղծագործություն է Քրիստոսի մեջ, Հոգում և երկնային ոլորտներում՝ 2:6.
    - ա. Եթե Մարմնի կյանք չունենք, անպիտան ենք հոգևոր պատերազմին մասնակցելու համար:
    - բ. Մարտը վարելու համար մենք պետք է Մարմնի իրականության մեջ լինենք՝ 4:12, 16:
  4. Այն բանից հետո, եթե ընդհանրականորեն ձևավորվենք որպես բանակ, կկարողանանք մարտնչել Աստծու քշնամու դեմ՝ 6:11-12:
- Ե. Աստծու քշնամու դեմ պատերազմելու համար պետք է զորությամբ լցվենք այն զորության մեծության շնորհիվ, որը Քրիստոսին մեռելներից հարուցանեց ու Նրան նստեցրեց երկինքներում՝ օդում եղող բոլոր չար հոգիներից շատ ավելի բարձր՝ խ. 10, 1:19-22.
  1. Այն, որ մենք պետք է Տիրոջ մեջ զորությամբ լցվենք, ցույց է տալիս, որ մենք չենք կարող Սատանայի և նրա չար բազավորության դեմ հոգևոր պատերազմը մղել ինքներս մեր մեջ. մենք կարող ենք պատերազմել միայն Տիրոջ մեջ և Նրա ուժի կարողության մեջ՝ 6:10:
  2. Զորությամբ լցվելու հրամանը ենքաղորում է մեր կամքը վարժելու անհրաժեշտությունը. Եթե ուզում ենք զորությամբ լցվել հոգևոր պատերազմի համար, մեր կամքը պետք է լինի ուժեղ և վարժված՝ Երգ 4:4:
- Զ. Մենք պետք է իմանանք ու կիրառենք հոգևոր պատերազմի սկզբունքները.
  1. Հոգևոր պատերազմի առաջին սկզբունքն այն է, որ մենք չենք կարող օգտագործել մսեղավոր գենքերը, մարդկային խարդավաճքներն ու բնական մեթոդները. քանի որ հոգևոր պատերազմը ոչ թե մսեղիի դեմ է, այլ հոգևոր ուժերի (Եփս 6:12), զենքերը չպետք է մսեղավոր լինեն (Բ Կրթ 10:3-5):

## ԲՅՈՒՐԵՂԱՅՈՒՄ-ՌԻՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՈՒՐՎԱԳՐԵՐ

2. Հոգևոր պատերազմի երկրորդ սկզբունքը համբարձման դիրքը պահելն է՝ Եփս 2:6.
  - ա. Մարտը վարելիս թշնամուց վեր եղող դիրքը ռազմավարական է:
  - բ. Սատանան և նրա հոգևոր ուժերը օդում են, իսկ մենք նստեցված ենք երրորդ երկնքում՝ նրանցից վեր՝ խ. 6:
  - գ. Սատանան և նրա ուժերը մեզնից ներքև են, ուստի նրանց վիճակված է մեր կողմից պարտություն կրելու:
3. Հոգևոր պատերազմի երրորդ սկզբունքն այն է, որ մենք պետք է օգտագործենք հոգևոր գենքերը՝ Բ Կրք 10:3-5.
  - ա. Հոգևոր գենքերը զորավոր են՝ թշնամու ամրությունները խորտակելու՝ խխ. 4-5.
  - բ. Երբ մենք պատերազմում ենք, մեր բոլոր գործողությունները պետք է հոգուց լինեն՝ դիմուլ մեր հոգու ներսում եղող զգացողությանը. սա ծայրաստիճան հիմնարար սկզբունք է:
4. Հոգևոր պատերազմի չորրորդ սկզբունքը մարտնչող աղոքքներ՝ հոգևոր պատերազմի աղոքքներ ունենալն է՝ Մտք 6:9-10, 13.
  - ա. Երբ էլ որ և որտեղ էլ որ եկեղեցու կառուցում է լինում, այնտեղ նրա դեմ գործում են դժոխքի դարպասները. ուստի մարտնչող աղոքքների անհրաժեշտություն կա՝ 16:18-19:
  - բ. Եթե տեսնենք, որ ամենամեծ արժեքը ունեցող աղոքքները համբարձման մեջ եղող աղոքքներն են, ապա կկարողանանք հասկանալ, որ աղոքքը պատերազմ է, և մենք պատերազմի աղոքքներ կարտարերենք. այսպիսին է Եփեսացիներին ուղղված թղթի 6-րդ գլուխում նշված աղոքքի բնույթը.
    - 1) Բոլոր աղոքքները, որոնք արտաքերվում են երկնային ոլորտում ու Աստծու գահից, պատերազմի աղոքքներ են՝ Հյու 5:8, 8:3-5:
    - 2) Եթե մենք երկնային ոլորտում ենք, ընդունակ ենք համբարձման աղոքքներով՝ պատերազմի աղոքքներով աղոքելու՝ Եփս 2:6, 6:18:
  - գ. Երբ մենք ամրապնդվում ենք, նորոգվում ենք. երբ նորոգվում ենք, լցում ենք. երբ լցում ենք, զինվում ենք պատերազմելու. հենց պատերազմող, մարտական հոգում ենք հոգևոր պատերազմի մարտնչող աղոքքներով աղոքում՝ 3:14-16, 4:23-24, 5:18թ, 6:18:
  - դ. Մենք պետք է կանգնենք բանսարկուի դավերի դեմ՝ մարտնչող աղոքքներով մարտնչելով Մարմնում՝ ամեն ժամանակ հոգում աղոքելով Աստծու ողջ սպառագինությունը հազմելու համար, որպեսզի կառուցենք Քրիստոսի Մարմինը՝ որպես Աստծու տունն Աստծու փառքի համար և որպես Աստծու թագավորությունն Աստծու տիրակալության համար՝ հանուն Աստծու տնտեսության վերջնական կատարման՝ խխ. 10-20: